# ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ (ԱՊՊԱ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**N *ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-26/60***

ք. Արտաշատ «23» ապրիլ 2026թ.

«***Արփաշափի համայնքապետարան***»-ը, ի դեմս համայնքի ղեկավար Կ. Մկրտչյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն, ի դեմս գործադիր տնօրեն Ա. Մելքոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ***Տրանսպորտային միջոցների հետ կապված ապահովագրական (ԱՊՊԱ) ծառայություններ*** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:[1]

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.[2]

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

---

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:[3]

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:[4]

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **30** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է ***310 000 (երեք հարյուր տասը հազար)*** ՀՀ դրամ:[5]

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի *25-ը:*

---

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[6]

**ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[7] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:[8]

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

**6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը

հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը[9]

---

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Արտաշատի համայնքապետարան
Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ,
ք. Արտաշատ, Օգոստոսի 23/62
Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 04240737
Հ/Հ՝ 900412201023
Համայնքի ղեկավար՝ Կ. Մկրտչյան

-----------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արամի 3,5
"Հայէկոնոմբանկ" ԲԲԸ
Հ/Հ ՝ 163008157113
ՀՎՀՀ՝ 02551341

-----------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված N 1*
*«23» ապրիլի 2026թ. կնքված*
*ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-26/60 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մատուցման | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 66511170/5 | | դրամ | 43 000 | 1 | Ք. Արտաշատ, Օգոստոսի 23/62 | Պայմանագրի ժամկետ՝ համաձայն աղյուսակ 2-ի |
| 2 | 66511170/6 | | դրամ | 46 000 | 1 | Ք. Արտաշատ, Օգոստոսի 23/62 | Պայմանագրի ժամկետ՝ համաձայն աղյուսակ 2-ի |
| 3 | 66511170/7 | | դրամ | 46 000 | 1 | Ք. Արտաշատ, Օգոստոսի 23/62 | Պայմանագրի ժամկետ՝ համաձայն աղյուսակ 2-ի |
| 4 | 66511170/8 | | դրամ | 43 000 | 1 | Ք. Արտաշատ, Օգոստոսի 23/62 | Պայմանագրի ժամկետ՝ համաձայն աղյուսակ 2-ի |
| 5 | 66511170/9 | | դրամ | 43 000 | 1 | Ք. Արտաշատ, Օգոստոսի 23/62 | Պայմանագրի ժամկետ՝ համաձայն աղյուսակ 2-ի |
| 6 | 66511170/10 | | դրամ | 46 000 | 1 | Ք. Արտաշատ, Օգոստոսի 23/62 | Պայմանագրի ժամկետ՝ համաձայն աղյուսակ 2-ի |
| 7 | 66511170/11 | | դրամ | 43 000 | 1 | Ք. Արտաշատ, Օգոստոսի 23/62 | Պայմանագրի ժամկետ՝ համաձայն աղյուսակ 2-ի |

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

Արտաշատի համայնքապետարանի ծառայողական ավտոմեքենաների ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ)՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի և «Ապահովագրողի»՝ Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմաններին:
Նշված տրանսպորտային միջոցների (ԱՊՊԱ) պայմանագրերը պետք է կնքվեն 1 /մեկ/ տարի ժամկետով յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի համար: Յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի համար 1 /մեկ/ տարի ժամկետը սկսվում է գործող (ԱՊՊԱ) պայմանագիրը վերջանալու հաջորդ օրը՝ անկախ օրացուցային տարվանից, իսկ գործող (ԱՊՊԱ) պայմանագիրը չունենալու դեպքում՝ ծառայության մատուցման պայմանագիրը ուժի մեջ մտնելու հաջորդ օրվանից ժամը 00:00–ից:

Ավտոմեքենաների ցանկ՝ համաձայն աղյուսակ 1-ի:

**ԱՂՅՈՒՍԱԿ 1**

**/Արտաշատի համայնքապետարանի ծառայողական ավտոմեքենաների ցանկ/**

| Հ/Հ | Ավտոմեքենայի մակնիշ | Պետհամարանիշ | Թողարկման տարեթիվ | Շարժիչի հզորություն | ԱՊՊԱ պայմանագրի գործողության ժամկետի սկիզբ | Նույնականացման համար | Տեխանձնագրի համար |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | TOYOTA CAMERY 2.5 | 333CQ61 | 2022 | 203 | 17/09/2026թ. 1 տարի ժամկետով | JTNB14HK7P3181427 | YB118899 |
| 2. | TOYOTA COROLA 1.6 | 060CO61 | 2017 | 122 | 14/04/2026թ. 1 տարի ժամկետով | NMTBB4JE70R197264 | YF075030 |
| 3. | TOYOTA CAMERY 2.4 | 020CU61 | 2010 | 167 | 29/12/2026թ. 1 տարի ժամկետով | JTNBE40K303203588 | YB207459 |
| 4. | RENAULT DUSTER 2.0 | 069CO61 | 2013 | 135 | 29/12/2026թ. 1 տարի ժամկետով | VF1HSRAJA49773360 | YF079365 |
| 5. | HYUNDAI | 056CO61 | 2012 | 132 | 24/09/2026թ. | KMHDG41CADU7097 | YF071824 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ELANTRA 1.6 | | | | 1 տարի ժամկետով | 83 | |
| 6. | TOYOTA COROLA 1.3 | 068CO61 | 2014 | 101 | 19/09/2026թ. 1 տարի ժամկետով | NMTBT0JE50R00340 3 | YF079357 |
| 7. | HYUNDAI ACCENT | 066CO61 | 2011 | 107 | 20/06/2026թ. /1 տարի ժամկետով/ | Z94CT41CABR014167 | YF075436 |

## ԱՂՅՈՒՍԱԿ 2
## ԱՊՊԱ պայմանագրի մատուցման ժամկետը**

| Հ/Հ | Ավտոմե քենայի պետ. համարանիշը | Կազմակերպության ՀՎՀՀ | ԱՊՊԱ պայմանագրի սկիզբ | ԱՊՊԱ պայմանագրի գործողության ժամկետ |
|---|---|---|---|---|
| 1. | 333CQ61 | 04240737 | գործող պայմանագրի ավարտման օր | մեկ տարի |
| 2. | 060CO61 | 04240737 | գործող պայմանագրի ավարտման օր | մեկ տարի |
| 3. | 020CU61 | 04240737 | գործող պայմանագրի ավարտման օր | մեկ տարի |
| 4. | 069CO61 | 04240737 | գործող պայմանագրի ավարտման օր | մեկ տարի |
| 5. | 056CO61 | 04240737 | գործող պայմանագրի ավարտման օր | մեկ տարի |
| 6. | 068CO61 | 04240737 | գործող պայմանագրի ավարտման օր | մեկ տարի |
| 7. | 066CO61 | 04240737 | գործող պայմանագրի ավարտման օր | մեկ տարի |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Արտաշատի համայնքապետարան
Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ,
ք. Արտաշատ, Օգոստոսի 23/62
Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 04240737
Հ/Հ՝ 900412201023
Համայնքի ղեկավար՝ Կ. Մկրտչյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արամի 3,5
"Հայէկոնոմբանկ" ԲԲԸ
Հ/Հ ՝ 163008157113
ՀՎՀՀ՝ 02551341

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 23 » ապրիլի 2026թ. կնքված
ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-26/60 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 66511170/5 | ԱՊՊԱ ծառայություններ /TOYOTA CAMERY 2.5/ | 0 | 0 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 |
| 2 | 66511170/6 | ԱՊՊԱ ծառայություններ /TOYOTA COROLA 1.6/ | 0 | 0 | 46 000 | 46 000 | 46 000 | 46 000 | 46 000 | 46 000 | 46 000 | 46 000 | 46 000 | 46 000 | 46 000 |
| 3 | 66511170/7 | ԱՊՊԱ ծառայություններ /TOYOTA CAMERY 2.4/ | 0 | 0 | 46 000 | 46 000 | 46 000 | 46 000 | 46 000 | 46 000 | 46 000 | 46 000 | 46 000 | 46 000 | 46 000 |
| 4 | 66511170/8 | ԱՊՊԱ ծառայություններ /RENAULT DUSTER 2.0/ | 0 | 0 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 |
| 5 | 66511170/9 | ԱՊՊԱ ծառայություններ /HYUNDAI ELANTRA 1.6/ | 0 | 0 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 |
| 6 | 66511170/10 | ԱՊՊԱ ծառայություններ / TOYOTA COROLA 1.3/ | 0 | 0 | 46 000 | 46 000 | 46 000 | 46 000 | 46 000 | 46 000 | 46 000 | 46 000 | 46 000 | 46 000 | 46 000 |
| 7 | 66511170/11 | ԱՊՊԱ ծառայություններ / HYUNDAI ACCENT/ | 0 | 0 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 | 43 000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Արտաշատի համայնքապետարան
Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ,
ք. Արտաշատ, Օգոստոսի 23/62
Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 04240737
Հ/Հ՝ 900412201023
Համայնքի ղեկավար՝ Կ. Մկրտչյան

____________________
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արամի 3,5
"Հայէկոնոմբանկ" ԲԲԸ
Հ/Հ ՝ 163008157113
ՀՎՀՀ՝ 02551341

____________________
/ստորագրություն/
Կ.Տ

| | ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ | ՎԿԱՅԱԳԻՐ N |
|---|---|---|
| Sil insurance | | S T 5 5 4 7 2 4 |

Ապահովագրության դասը՝ Ցամաքային Ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն

| | | |
|---|---|---|
| 1 | Ապահովագրող | «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ, ՀՀ, 0010, ք. Երևան, Արամի 3 և 5, հեռախոս՝ +374-60-54-00-00, էլ. փոստ՝ info@silinsurance.am, կայք՝ www.silinsurance.am, ՀՀ ԿԲ գրանցման համար՝ 6, լիցենզիա՝ ԱՊՈ 0004 (0033), ՀՎՀՀ՝ 02551341, բանկ՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, հ/հ՝ 163008157113 |
| 2 | Ապահովադիր | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Անվանում | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ «ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» | Հեռախոս | +374 (0235) 23639 | 3 Ավտոտրանսպորտային միջոցների քանակ: 2 |
| ՀՎՀՀ | 04240737 | | | |
| Էլ. փոստի հասցե | artashatmeria@artashat.am | Հաշվառման հասցե | ՀՀ, Արարատ, Արտաշատ, ՕԳՈՍՏՈՍԻ 23 ՓՈՂՈՑ, ԹԻՎ 62 | |
| Ապահովադրին պատկանող բանկային հ/հ | ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆ900415003020 | ԲՄ դաս, փոփոխման ամս. | 12, 09/02/2026 | |

| | | | |
|---|---|---|---|
| 4 | Ապահովագրության ժամկետ | Սկիզբ՝ 30/12/2026 00:00 | Ավարտ՝ 29/12/2027 |
| 5 | Ապահովագրավճար առանց ԲՄ դասի: 77000 ՀՀ դրամ | Մալուս: 11550 ՀՀ դրամ | Վճարման ենթակա ապահովագրավճար: 89000 ՀՀ դրամ |
| 6 | Ապահովագրավճարի վճարման կարգ և ժամկետ | Տարաժամկետ վճարումով, որից պայմանագրի կնքման պահին՝ -0– ՀՀ դրամ, մնացած մասը՝ հետևյալ կարգով (կանխիկ կամ անկանխիկ)՝ -89000– ՀՀ դրամ մինչև 05/01/2027 | |
| 7 | Ապահովագրության պայմաններ | | |

Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության ընդհանուր պայմանները (սույն պայմանագրում, նաև՝ ԱՊՊԱ պայմաններ)՝ ներառյալ ապահովագրական գումարի չափը, պայմանագրի կնքման համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների ստացման ու օգտագործման պայմանները, ապահովագրական պատահարները (ռիսկերը) և սույն պայմանագրի շրջանակներում կամ դրանից դուրս ԱՊՊԱ ոլորտում իրականացվող ծանուցումների կատարման կարգն ու պայմանները, սահմանված են Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի (այսուհետ՝ Բյուրո) իրավասու մարմնի կողմից հաստատված և Բյուրոյի՝ www.appa.am պաշտոնական ինտերնետային կայքի «Իրավական ակտեր» բաժնում հրապարակված ԱՊՊԱ ընդհանուր պայմաններով, որոնք կիրառվում են անմիջականորեն: ԱՊՊԱ ընդհանուր պայմանների առանձին դրույթներ կարող են փոփոխվել, վերացվել կամ լրացվել բացառապես այն ընդունած մարմնի կամ Կենտրոնական բանկի կողմից՝ օրենքով սահմանված կարգով, որի մասին Ապահովադիրը տեղեկանում է Բյուրոյի վերոհիշյալ ինտերնետային կայքից, որտեղ փոփոխությունները և (կամ) լրացումները հրապարակվում են գործողության մեջ մտնելու պահից առնվազն տասն օրացուցային օր առաջ:

| | |
|---|---|
| 7.1 | Թույլտվություն |

Սույն պայմանագրի կնքմամբ Ապահովադիրը թույլատրում է Բյուրոյին և դրա անդամ ապահովագրական ընկերություններին ինչպես սույն պայմանագրի կնքման և գործողության ընթացքում, այնպես էլ պայմանագրի գործողության ավարտից հետո միմյանց միջև կամ երրորդ անձանց հետ ցանկացած եղանակով և կրիչի վրա շրջանառել (ստանալ և տրամադրել) իր վերաբերյալ ցանկացած փաստաթուղթ, տեղեկություն, տեսանյութ, լուսանկար կամ այլ նյութ՝ ԱՊՊԱ պայմանագրում անհրաժեշտ տվյալների արտացոլման կամ արտացոլված տեղեկությունների ստուգման, ԱՊՊԱ պատահարի և դրա գծով իրականացվող հատուցման գործընթացի կարգավորման՝ ներառյալ փորձաքննությունների իրականացման, ինչպես նաև հատուցման վճարմամբ պայմանավորված հետադարձ պահանջի իրավունքի արդյունավետ իրականացման և ԱՊՊԱ ոլորտում անհրաժեշտ այլ գործողություններ իրականացնելու համար:

| | |
|---|---|
| 8 | Պատահարի մասին Ապահովագրողին ծանուցման ժամկետ և կարգ |

Ապահովադիրը (Ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) պարտավոր է ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո 40 րոպեի ընթացքում, իսկ ապահովագրական պատահարի հետևանքով անձնական վնասների առկայության դեպքում ԱՊՊԱ պայմաններով սահմանված ժամկետներում, այդ մասին հայտնել Ապահովագրողին՝ զանգահարելով +374-60-54-00-00,+374-12-54-00-00,+374-15-54-00-00 հեռախոսահամարով (որևէ մեկով):

| | | |
|---|---|---|
| 9 | 9.1 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԱՆՈՒՆԻՑ | 9.2 ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԱՆՈՒՆԻՑ |
| | «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ ԱՐՄԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ | ԳՈՌ ՆԱԶԱՐՅԱՆ |
| | Ստորագրություն | Ծանոթացել և համաձայն եմ Բյուրոյի www.appa.am ինտերնետային կայքում հրապարակված ԱՊՊԱ ընդհանուր պայմաններին՝ ներառյալ ԱՊՊԱ պայմանագրի գործողության ընթացքում և դրանից հետո ծանուցումների կիրառման կարգին, ուստի խնդրում եմ դրանք համարել իմ կողմից ստացված:<br>Ստորագրություն |
| 10 | Պայմանագրի կնքման և Ապահովադրին տրման ամսաթիվ՝ | 20/04/2026 |
| 11 | Սույն պայմանագրից բխող պահանջները կարող են ներկայացվել Ֆինանսական համակարգի հաշտարարին՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով: Ապահովագրողը Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր չի կնքել: | |